ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «14» հունվարի 2025 թ.

ՀՐԱՄԱՆ N 24-Լ

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնահատման գործունեության մասին» օրենքի 24.1-ին հոդվածի 1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետի և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Կադաստրի կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 749-Լ որոշման 16-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Կադաստրի կոմիտեում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների հաշվառման և հաշվառումից հանելու կարգը՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393

Հավելված
ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի
2025 թվականի հունվարի 14-ի
N 24-Լ հրամանի

ԿԱՐԳ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ

1. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը Կադաստրի կոմիտեում (այսուհետ՝ Լիազոր մարմին) հաշվառվելու նպատակով Լիազոր մարմնի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկում է ստորագրությամբ հաստատված դիմում՝ կից ներկայացնելով ինքնակարգավորվող կազմակերպության պետական գրանցման վկայականի և կանոնադրության պատճենները, իր անդամների ցանկը, գործունեության հնգամյա ծրագիրը, ծրագրի նպատակները, կատարվելիք միջոցառումները, ակնկալվող արդյունքները և ծրագրի իրականացման ժամանակացույցը:

2. Սույն կարգի 1-ին կետով նախատեսված փաստաթղթերով սահմանված տվյալների, բացառությամբ գործունեության հնգամյա ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցի, փոփոխության դեպքում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն այդ մասին անհապաղ, սակայն ոչ ուշ քան տվյալների փոփոխությունից հետո եռօրյա ժամկետում սույն կարգի պահանջների համաձայն հայտնում է Լիազոր մարմնին:

3. Լիազոր մարմնում հաշվառվելու նպատակով սույն կարգի 1-ին կետով ներկայացված դիմումը պետք է պարունակի՝

1) իրավաբանական անձի լրիվ անվանումը,

2) պետական գրանցման համարը և ՀՎՀՀ-ն,

3) իրավաբանական անձի գործունեության հասցեն,

4) դիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեն,

5) դիմումով ներկայացվող պահանջը,

6) դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,

4. Դիմումը և կից փաստաթղթերը վերադարձվում են դիմողին, եթե ներկայացված փաստաթղթերում առկա են թերություններ: Թերությունները վերացնելու համար Լիազոր մարմինը տրամադրում է 5 աշխատանքային օր, որը հաշվարկվում է դիմողի կողմից փաստաթղթերն ստանալու օրվանից: Թերությունները 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացվելու և Լիազոր մարմին կրկին ներկայացվելու դեպքում դիմումը համարվում է ներկայացված այն սկզբնապես ներկայացվելու օրը:

5. Ներկայացված հնգամյա ծրագրին և դրա իրականացման ժամանակացույցին հավանություն տալու պարագայում Լիազոր մարմինը 20-օրյա ժամկետում հաստատում է այն և սույն կարգի պահանջների համաձայն հաշվառում ինքնակարգավորվող կազմակերպությանը:

6. Այն դեպքում, երբ հավանության են արժանանում միաժամանակ հինգից ավելի գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից ներկայացված հնգամյա ծրագրեր և այդ ծրագրերի ժամանակացույցեր, ապա Լիազոր մարմնում հաշվառվում են առավել վաղ դիմում ներկայացրած կազմակերպությունները:

7. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը Լիազոր մարմնում հաշվառվում է Լիազոր մարմնի որոշմամբ՝ Լիազոր մարմնի կայքէջի հատուկ էլեկտրոնային համակարգի միջոցով:

8. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը հաշվառելու վերաբերյալ որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

9. Լիազոր մարմինը հաշվառված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը տրամադրում է Լիազոր մարմնի կայքէջի հատուկ էլեկտրոնային համակարգ մուտք գործելու մուտքանուն և գաղտնաբառ:

10. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառելու դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը կամ տեղեկություններն ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են,

2) գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության հաշվառման համար ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին,

3) դիմում ներկայացրած իրավաբանական անձը, օրենսդրության համաձայն իրավունք չունի զբաղվելու տվյալ գործունեությամբ,

4) դիմում ներկայացրած իրավաբանական անձը չի համապատասխանում «Գնահատման գործունեության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին,

5) հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը Լիազոր մարմնի կողմից հավանության չարժանանալու պարագայում,

6) հնգամյա ծրագրում և դրա իրականացման ժամանակացույցում Լիազոր մարմնի մատնանշած թերությունները չվերացնելուց հետո հերթական հնգամյա ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը երկրորդ անգամ ներկայացնելու պարագայում,

7) Լիազոր մարմնում արդեն իսկ հաշվառված են Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների առավելագույն քանակը:

11. Հաշվառում ստանալու համար ներկայացված դիմումը մերժելու վերաբերյալ Լիազոր մարմինը կայացնում է որոշում՝ նշելով մերժման պատճառներն ու հիմքերը: Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

12. Հնգամյա ծրագիրը կամ դրա իրականացման ժամանակացույցն ինքնակարգավորվող կազմակերպության դիմումի հիման վրա կարող է փոփոխվել՝ նախապես մեկ տարի առաջ Լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնելով փոփոխությունների ծրագիրը և դրանց հիմնավորումը: Ներկայացված հնգամյա ծրագրի կամ դրա իրականացման ժամանակացույցի փոփոխությանը հավանություն տալու պարագայում Լիազոր մարմինը 20-օրյա ժամկետում հաստատում է այն:

13. Հաստատված հնգամյա ծրագրի ավարտից վեց ամիս առաջ ինքնակարգավորվող կազմակերպությունը սույն հրամանով սահմանված կարգով Լիազոր մարմին է ներկայացնում հերթական հնգամյա ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը: Հերթական հնգամյա ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում Լիազոր մարմինը վերադարձնում է ներկայացված փաստաթղթերը՝ սահմանելով առկա թերությունները վերացնելու և փաստաթղթերը կրկին ներկայացնելու մինչև 15-օրյա ժամկետ:

14. Լիազոր մարմնի որոշմամբ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը հանվում է հաշվառումից՝

1) ներկայացված դիմումի համաձայն,

2) հաշվառման համար ներկայացված փաստաթղթերում կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ հայտնաբերելու դեպքում,

3) եթե չի կատարում հաշվառման ներկայացրած իր ծրագրի առնվազն 80 տոկոսը կամ կատարում է ժամանակացույցի էական խախտումներով,

4) եթե չի ներկայացնում կամ չի կատարում Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված վերապատրաստման ուսումնական ծրագիրը,

5) եթե չի ներկայացնում ամենամյա հաշվետվությունները կամ երկու և ավելի անգամ մեկ ամսից ավելի ժամկետով ուշացնում է հաշվետվության ներկայացումը,

6) հերթական հնգամյա ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում,

7) հնգամյա ծրագրում և դրա իրականացման ժամանակացույցում Լիազոր մարմնի մատնանշած թերությունները չվերացնելուց հետո հերթական հնգամյա ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցը երկրորդ անգամ ներկայացնելու պարագայում,

8) 12 օրացուցային ամիսների ընթացքում ավելի քան 60 օր կազմակերպությանն անդամակցող գնահատողների քանակը պակաս է Լիազոր մարմնում հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գնահատողների քանակի 10 տոկոսից,

9) 12 օրացուցային ամիսների ընթացքում Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտավորությունները երեք և ավելի անգամ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում,

10) Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում որակավորման և մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով գնահատողի թեկնածություն չառաջարկելու դեպքում:

15. Սույն կարգի 14-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված յուրաքանչյուր վերապատրաստման ուսումնական ծրագրի կատարման սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկությունները գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից ներկայացվում է Լիազոր մարմին: